



05/124666-18
1106.2/10914-18

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 1057

«dd» 09 2017 թ.

ք.Երևան

**ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ
25-Ի ԹԻՎ 765-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 259-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունում քաղաքացիների ընդունելության կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի օգոստոսի 16-ի N 721-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 765-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.
 - 1) հրամանով հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 3-րդ կետի 1-ին ենթակետում «Արմեն Երիցյան» բառերը փոխարինել «Դավիթ Տոնոյան» բառերով,
 - 2) կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում «Հայկարամ Մխիթարյան» բառերը փոխարինել «Արա Նազարյան» բառերով,
 - 3) կարգի 3-րդ կետի 4-րդ ենթակետում «Համլետ Հակոբյան» բառերը փոխարինել «Էնրիկո Ապրիամով» բառերով:
2. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Դ. ՏՈՆՈՅԱՆ